«Ռուս աղանդաւորների աղօթատները հասարակ տներ են և ամեն մօլական գիւղերում կան. իսկ դուխոբօրները սեպհական աղօթատուն չունեն բնաւին, և աղօթելու համար հերթով իրար մօտ են խմբւում։

«Պրիգուններները» «Աւետեաց երկիրը» գտնելու յուսով նշանաւոր թուով գաղթեցին Ամերիկա. Կալիֆօրնիայի նահանգը, և իբրև հասարակ բանւորներ գործարաններում և նման հաստատութիւնների մէջ տեղաւորուեցին. սակայն այնտեղ ընդ միշտ մնալու ցանկութիւն չունեն, որովհետև «Աւետեաց երկիրը» չգտնելով, յաւիտեան էլ հասարակ բանւոր մնալու ցանկութիւն չունեն։

«Բայի ռուս աղանդաւորներից Կարսի նահանգում հայ աղանդաւորներ էլ կան, որոնք ապրում են Կարակալա գիւղում մօտ 78 տուն կամ 260 հոգի. երկու տեսակ։ Նրանք պաշտօնապէս հայ բողոքականներ են կոչւում, բայց, ինչպէս հաստատում է «Обзоръ»-ը, իսկապէս պատկանում են ռուս մոլոկանութեան զանազան հատուածներին։ Նրանց մէջ կան պրիգուններ, սուբբոտնիկներ և այլն։ Մոլոկան վարդապետութիւնը նրանք ընդունել են Երևանեան նահանգի մոլոկաններից, ուր առաջ նրանք ապրում էին։ Կարսի նահանգի միւս հայերի մէջ Կարակալացիները իրանց վարդապետութեանը հետևողներ չեն գտնում։

—※ ※—

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Երուսաղէմի յոյն պատրիարքարանի նոր խառն ժողովը. Ցայտնի է, որ Երուսաղէմի օրթոդոքս պատրիարքարանի մօտ կազմուել է նոր վարչական գործն-խառն ժողով, որը պէտք է օգնի պատրիարքին և նրա սուրբ Սինոդին՝ Սիօնի եկեղեցու կառավարութեան գործում։

Երուսաղէմի խառն ժողովը արդէն սկսել է իր գործունէութիւնը։ Ժողովի բաղկացութեան մէջ մտել են վեց հոգևոր անձինք Երուսաղէմի պատրիարք Դամիանոսի նա-

խագահութեամբ և վեց աշխարհականներ՝ ընտրուած Երուսաղէմի, Եաֆֆայի, Ակրայի, Նազարէթի, Բեթղեհէմի և Մալտայի օրթոդոքս ազգաբնակութիւնից. Հոգևոր անդամները պատրիարքից և Ս. Սինոդից են նշանակուած. Պատրիարքի բացակայութեան ժամանակ ժողովին կը նախագահի նրա տեղակալը։

«Այսպէս, ասում է Церк. Вѣст.-ը, Երուսաղէմի եկեղեցու կենտրոնական վարչութեան մէջ սկսւում է նոր շրջան՝ նոր-խառն ժողովի գործունէութեան բացմամբ։ Մենք էլ մեծ ուշադրութեամբ կը հետևենք այս վարչական հաստատութեան զբաղմունքի հետևանքին և աշխատանքի ընթացքին, վարչութեան, որի վերայ մեծ յոյսեր են դնում Պաղեստինում։

Եկեղ. կրօնական կեանքը արևելքում.—Վերջին տարիներս օրթոդոքս արևելքում մեծ ուշադրութիւն են դարձնում եկեղեցական-կրօնական կեանքի վերայ. Եւ այդ բանը երևում է բազմաթիւ կրօնական-բարոյական լրագրերի, օրագրերի և ամսագրերի հրատարակութեամբ։

«Կ. Պոլիս, Աղէքսանդրիա, Երուսաղէմ և, վերջապէս, Սամոս, ահա այն տեղերը, ասում է Церк. Вѣст.-ը, ուր յաջողութեամբ առաջ է գնում մեր յոյն ուսանողների ուսումնական-կրթական գործունէութիւնը։ Յաջողութիւն, կասենք մենք հեռաւոր Հիւսիսից, մեր աշակերտներին, որոնք բարձր են պահում ազնիւ հարաւում մեր բոլորիս Almae matris-ի դրօշակը»։

Կ. Պոլսոյ յոյն արքեպիսկոպոսութեան վիճակացոյց.

—Կ. Պոլսոյ օրթոդոքս արքեպիսկոպոսութեան մէջ, ուր են Կ. Պոլիսն ու շրջակայքը, պաշտօնական ցուցակի համեմատ 1909–10 ուսումնական տարին կային 78 յոյն ուսումնարան, որոնց մէջ կար 511 ուսուցիչ իսկ սովորող՝ եկու սեռից՝ 16531։ Ի մասնաւորի աստուածաբանական

դրպրոցում, որ գտնուում է Խալկի կղզում, և բաղկացած է 7 դասարանից, կան ուսուցիչ՝ 13, ուսանող՝ 81։ Գիմնազիաներ կան արականների՝ 3, աղջկանց՝ 4։ Քաղաքում կար և մի օտար լեզուների և առևտրական դպրոց։ Տարրական դպրոցները քաղաքային և ժողովրդական՝ 64 և մասնաւոր՝ 5։ Ուսուցիչներից 167-ը սովորեցնում էին միջնակարգ դպրոցներում, 257-ը քաղաքային և ժողովրդական և 87-ը մասնաւոր դպրոցներում. աշակերտներից 3425-ը միջնակարգ դպրոցներում (1480 արական 1945 իգական, 12,401 քաղաքային և տարրական դրպրոցներում (6443+5213) և մասնաւոր դպրոցներում՝ 805 (430+375)։

Փոխադարձ այցելութիւններ. Տեղի ունեցաւ Ցունվարի մէջ յոյն տիեզերական պատրիարքի և անգլիացոց դեսպանի փոխադարձ այցելութիւն, այժմ էլ, ինչպէս հաղորդում է Церк. Вѣст.-ը, փոխադարձ այցելութիւն է տեղի ունեցել Ռուսաց դեսպան Чарыковъ-ի հետ. ինչպէս առաջին, նոյնպէս և այս այցելութեանը մեծ կարևորութիւն են տալիս յոյն լրագրները յոյն պատրիարքարանի ընթացիկ գործերի առիթով։ Церк. Вѣст.-ը գրում է. «Լրագրները ուշադրութիւն դարձրին և այն անսովոր յարգանքի վերայ, որը ցոյց տրուեց Նորին Սրբութեան Ցովակիմ պատրիարքին՝ ռուս դեսպանատան մէջ։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Վատիկանի յարաբերութեան կարգաւորուելը. Ռուսիայի հետ

Լրագրներում (Кавказъ—№ 54) կարդում ենք Պետերբուրգի հեռագրական գործակալութեան հեռագիրը հետևեալ բովանդակութեամբ.